ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանը հայտարարում է մրցույթ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ենթակայության հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների հետևյալ թափուր պաշտոններն զբաղեցնելու համար

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Գյումրու բժշկական կենտրոն>>, <<Գյումրու թիվ 1 պոլիկլինիկա>>, <<Գյումրու <<Միջազգային կարմիր խաչի>> անվան պոլիկլինիկա>>, <<Բեռլին պոլիկլինիկա>>, <<Գյումրու արյան փոխներարկման կայան>>, <<Գյումրու շտապ բուժական օգնության կայան>> փակ բաժնետիրական ընկերությունների տնօրենների թափուր պաշտոններն զբաղեցնելու համար պահանջվում է՝

1. բարձրագույն բժշկական կրթություն, առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ բժշկական ոլորտի ձեռնարկատիրական կամ առողջապահական համակարգի կառավարման ոլորտի առնվազն 3 տարվա ստաժ,
2. իր պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, բաժնետիրական ընկերությունների, աշխատանքային, առողջապահության ոլորտի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրություն և այլ իրավական ակտեր),
3. կազմակերպության զարգացման ծրագրեր մշակելու կարողություն, աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություն, ներառյալ՝

ա. ստորաբաժանումների աշխատանքների կազմակերպման, անձնակազմի աշխատանքի ընդունման, ազատման և վերապատրաստման գործընթացների կազմակերպման,

բ. աշխատանքների բաշխման, կարգապահական պատասխանատվության, խրախուսանքի միջոցների կիրառման,

4. համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,
5. ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն, ներառյալ՝ գույքի, ներառյալ ֆինանսական միջոցների տնօրինման, և գործարքներ կնքելու կարողություններ,
6. բժշկական ծառայությունների պատշաճ մատուցման, ինչպես նաև անձնակազմի կողմից ռեսուրսների արդյունավետ օգտագործման և լրացուցիչ աշխատողների, սարքավորումների և ծառայությունների անհրաժեշտության գնահատում,
7. օտար լեզվի բավարար իմացություն:
8. Մրցույթները կանցկացվեն.

1) <<Գյումրու բժշկական կենտրոն>> ՓԲԸ՝ 2016թ. հուլիսի 26-ին ժամը 11:00–ին,
2) <<Գյումրու թիվ 1 պոլիկլինիկա>> ՓԲԸ՝ 2016թ. հուլիսի 26-ին ժամը 15:00–ին,
3) <<Գյումրու <<Միջազգային կարմիր խաչի>> անվան պոլիկլինիկա>> ՓԲԸ՝ 2016թ. հուլիսի 27-ին ժամը 11:00–ին,
4) <<Բեռլին պոլիկլինիկա>> ՓԲԸ՝ 2016թ. հուլիսի 27-ին ժամը 15:00–ին,
5) <<Գյումրու արյան փոխներարկման կայան>> ՓԲԸ՝ 2016թ. հուլիսի 28-ին ժամը 11:00–ին,
6) <<Գյումրու շտապ բուժական օգնության կայան>> ՓԲԸ՝ 2016թ. հուլիսի 28-ին ժամը 15:00–ին:

9. Մրցույթին մասնակցելու համար քաղաքացիները ՀՀ Շիրակի մարզպետարան են ներկայացնում՝

1) դիմում.

2) մեկ լուսանկար 3 x 4 չափսի.

3) քաղվածք՝ աշխատանքային գրքույկից.

4) ինքնակենսագրություն.

5) անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի) պատճենները.

6) քաղաքացու ցանկությամբ՝ հրապարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ՝ դրանց առկայության դեպքում.

7) բնութագիր՝ վերջին աշխատավայրից (եթե կազմակերպությունը չի լուծարվել).

8) կազմակերպության զարգացման նախնական ծրագիրը (ներկայացվում է մրցույթի օրվանից առնվազն երեք օր առաջ), որը ներառում է կազմակերպության զարգացման և բարեփոխման, ինչպես նաև կազմակերպության մասնագիտական, ֆինանսատնտեսական և կառավարման ոլորտի զարգացման հիմնական ուղենիշները, կազմակերպության կառուցվածքի և գործունեության բարեփոխմանն ուղղված առաջարկությունները: Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի հետ աշխատանքային պայմանագրի կնքման դեպքում դրանում նախատեսված ժամկետում կազմակերպության զարգացման նախնական ծրագրի հիման վրա նրա կողմից ներկայացվում է կազմակերպության զարգացման հիմնական ծրագիրը, որը ներառում է բաժիններ կազմակերպության մասնագիտական, ֆինանսատնտեսական և կառավարման ոլորտի զարգացմանն ուղղված միջոցառումների և դրանց իրականացման ժամանակացույցի վերաբերյալ:

10. Քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր և պահանջվող փաստաթղթերի բնօրինակները:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր, ժամը 9:30-12:30, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 24.06.2016թ.:

Մրցույթը կկայանա Շիրակի մարզպետարանի շենքում (ք. Գյումրի, Գ.Նժդեհի 16): Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկությունների, ինչպես նաև հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմ (ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16, անձնակազմի կառավարման բաժին, հեռախոս 0312 4-90-00-156):